

ՓՈԽԱԿԱՐԳՈՒՄԸ ԱՆԳԼԵՐԵՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԵՆԻ «ՏԱՐԻՔ» ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՇՏՈՒՄ

ՄԱՐԻԱՄ ԱԴԱՄՅԱՆ * 

Վ. Բրյուսովի անվ. պետական համալսարան

Մույն հոդվածում ուսումնասիրվում են փոխակարգման դրսևորումները անգլերենի և հայերենի «տարիք» իմաստային դաշտում: Փոխակարգումը սերող բառի խոսքիմասային փոփոխությամբ նոր բառ ստեղծելն է, որը չի ենթադրում սերող բառի ձևի որևէ ձևաբանական փոփոխություն: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ փոխակարգումը ավելի բնորոշ է անգլերենին, քան հայերենին, որը պայմանավորված է հայերենի խոսքի մասերի կոնկրետ վերջավորությունների առկայությամբ: Այս առումով հայերենը ցուցաբերում է ավելի կառուցվածքային մոտեցում, որը պայմանավորված է լեզվի թեքական համակարգով: Ընդհանուր առմամբ, հոդվածում անդրադարձ է արվում փոխակարգման նմանություններին և տարբերություններին լեզվական տարբեր համատեքստերում: Աշխատանքի նպատակն է ցույց տալ, թե ինչպես է փոխակարգումն ազդում անգլերենի և հայերենի տարիք ցույց տվող միավորների կիրառության, ինչպես նաև նշանակությունների վրա, բացահայտել լեզվական և մշակութային նրբերանգներ: Այն կարող է օգտակար լինել հետազոտողների համար՝ պատկերացում տալով, թե ինչպես են լեզուները ի վիճակի արտահայտելու մարդկային համընդհանուր փորձառությունները:

Բանալի բառեր - փոխակարգում, տարիք, իմաստային դաշտ, բայ-փոխակարգիչներ, տրանսպոզիցիա, բառակազմություն

Տարիքը այնպիսի հասկացություն է, որն անքակտելիորեն կապված է մարդու կյանքի, փորձի, գործունեության, ինչպես նաև մարդու՝ որպես սոցիալական անհատ լինելու հետ: Լեզվական առումով հարկ է նշել, որ տարիք արտահայտող բառերն ու արտահայտություններն արտացոլում են հասարա-

* **Մարիամ Ադամյան** – բանասիրական գիտությունների թեկնածու, Վ. Բրյուսովի անվ. պետական համալսարանի դասախոս

Мариам Адамян – кандидат филологических наук, преподаватель государственного университета имени В. Я. Брюсова

Mariam Adamyan – PhD in Philology, Lecturer at Brusov State University

Էլ. փոստ՝ mariam@leadavenue.com <https://orcid.org/0000-0001-9474-7129>



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 17.07.2024

Գրախոսվել է՝ 14.09.2024

Հաստատվել է՝ 07.03.2025

© The Author(s) 2025

կույթյան մշակութային, սոցիալական և հոգեբանական ասպեկտները: Տարբեր լեզուներ տարբեր ձևերով են արտահայտում «տարիք» հասկացությունը՝ օգտագործելով հատուկ եզրույթներ, արտահայտություններ և քերականական կառուցվածքներ՝ նշելով կյանքի տարբեր փուլերը՝ մանկությունից մինչև ծերություն: Հետազոտության արդյունքում պարզ դարձավ, որ անգլերենի և հայերենի ուսումնասիրվող միավորների մեծ մասը կազմված է փոխակարգման միջոցով: Այդ եղանակով բառերը, չկրելով որևէ ձևաբանական փոփոխություն, փոխում են իրենց քերականական կատեգորիան: Այս երևույթը ապացույցն է այն փաստի, որ բառերը լեզվի ներսում օժտված են բարձր հարմարվողականությամբ և ցանկացած համատեքստում ի վիճակի են արտահայտել լեզվական բազում նրբերանգներ:

Անգլերենի և հայերենի բառարանների ուսումնասիրության արդյունքում դուրս են բերվել և աշխատանքում ներկայացվել են երկու լեզուների տարիքացույց տվող և՛ ուղիղ, և՛ փոխաբերական, ինչպես նաև ոճական նշույթավորում ունեցող միավորները: Անգլերենի բացատրական բառարաններից դուրս է բերվել «տարիք» իմաստ արտահայտող 69, իսկ հայերենի բառարաններից՝ 119 միավոր, որոնց ամբողջական ցանկը ներկայացված է ստորև՝

adolescent, adult, age, ancient, baby, beardless, big, boy, bud, calf, chap, chick, child, coeval, crone, cub, damsel, decrepit, elderly, father, full-blown, gaffer, gammer, geriatric, girl, gray, grow, grow up, grown-up, heifer, hoary, immature, infant, junior, juvenile, kid, little, long-lived, mature, middle-aged, minor, miss, moppet, mother, newborn, old, over-the-hill, peer, perennial, piglet, puberty, ripe, sapling, senescent, senile, senior, shaver, small, sprat, sprout, stripling, teenage, toddler, unyoung, venerable, verdant, whelp, young, youngster, ալևոր, ահեղ/ա-հիլ, ահեղ-ջահեղ, աղածրի, աղջիկ, աղջկահասակ, աղվամազ, աճել, ամիլիկ, ամսական, անարբուն(ք), անչափահաս, ավագ, բազմամյա, բազմատի, բալիկ, բիձա, բյուրամյա/ն, բողբոջ, գոճի, գրկանոց, դալար, դեռաբողբոջ, դեռաբույս, դեռածաղիկ, դեռածիլ, դեռածին, դեռահաս/ակ, դեռատի, դպրոցահասակ, երեխա, երեց, երինջ, երիտասարդ, երկարակյաց, երկարամյա, երկարարև, զառամ/զառամյալ, զավակ, լակոտ, խմորակեր, խոճկոր, ծաղկահասակ, ծաղկատի, ծեր/ուկ, ծիլ, ծծկեր, կաթնակեր, կանաչ, կանխահասակ, կոկոն, կորյուն, կրտսեր, հայր, հասակ, հասակալից, հասակակից, հասակամոտ, հասակավոր, հասուն, հինավուրց, հորթ, ձագ, ճուտ, մայր, մանկահասակ/ակ, մանկամարդ, մանուկ, մանչ, մատաղ, մատաղաբույս, մատաղածիլ, մատաղածին, մատաղահաս/ակ, մատաղատի, մատղաշ, մեծ, մեծահասակ, միջահասակ, նորաձ, նորաբեղ, նորաբողբոջ, նորաբույս, նորածաղիկ, նորածիլ, նորածին/նորածնունդ, նորահաս, նորամանուկ, շաբաթական, որդի, ուլ, չափահաս, պապ, պառավ, պատանի, պարման, պստիկ, պտուղ, ջահել, ջահել-ջիվան, ջահել-ջուհուլ, ջիվան, վառելի, տատ, տարեկան, տարեկից, տարեց, տա-

րիք, տարիքավոր, տարիքոտ, տհաս, տղա, տղայահասակ, փոքր, փոքրահասակ, քավթառ, քոթոթ, օրական, օրհորդ:

Սույն հոդվածում ուսումնասիրվում են փոխակարգման դրսևորումները անգլերենի և հայերենի «տարիք» իմաստային դաշտում, առաջին անգամ փորձ է արվում վեր հանելու երկու լեզուների ուսումնասիրվող իմաստային դաշտի միավորների լեզվական նմանություններն ու տարբերությունները: Աշխատանքի նպատակն է ցույց տալ, թե ինչպես է փոխակարգումն ազդում անգլերենի և հայերենի տարիք ցույց տվող միավորների կիրառության, ինչպես նաև նշանակությունների վրա, բացահայտել լեզվական և մշակութային նրբերանգներ:

«Փոխակարգում» եզրույթը լեզվաբանության մեջ ներմուծել է Հենրի Սվիթթը: Սակայն մինչ այժմ փոխակարգման կարգավիճակը բառակազմական միջոցների շարքում հստակեցման կարիք ունի: Ըստ Լ. Բաուերի՝ փոխակարգումը բառի գործառույթի փոփոխությունն է¹: Որոշ գիտնականներ, օրինակ՝ Ջ. Լայոնզը, դիտում են այն որպես ածանցման միջոց²: Մեր կարծիքով՝ Լայոնզի այս մոտեցումը բավականին վիճահարույց է, քանի որ նոր բառեր կարող են ստեղծվել առանց ածանցների, նաև մի շարք այլ բառակազմական միջոցներով, օրինակ՝ բառաբարդման, հապավման և այլն:

Ն. Մարչանդը փոխակարգումը դիտարկում է որպես բառակազմության անաձանց միջոց և, մանրագնին վերլուծելով այն, փորձում բացահայտել նրա բառակազմական հնարավորությունները: Խոսքիմասային տեղաշարժը, ինչպես գոյականացումը, ածականացումը և մակբայացումը, նա համարում է փոխակարգման տեսակ, որը բնութագրվում է իբրև բառակերտում զրոյական ձևային միջոցով³:

Փոխակարգման վերաբերյալ գոյություն ունեցող բազմաթիվ և տարաբնույթ մոտեցումները հայրենական, ռուս և արևմտյան լեզվաբանության մեջ մանրագնին քննարկվել են պրոֆեսոր Լ. Մ. Խաչատրյանի «Խոսքիմասային տարաբեքությունն արդի հայերենի կայուն կապակցություններում» մենագրության մեջ: Անդրադառնալով փոխակարգման երևույթին վերաբերող ռուս և արտասահմանյան մի շարք նշանավոր լեզվաբանների կարծիքին՝ Լ. Մ. Խաչատրյանը նշում է, որ այն դիտվել է իբրև բառային բառաքերականական հատկանիշների փոփոխության արդյունք⁴: Այդ կարգի փոփոխությունները մասնագիտական գրականության մեջ հայտնի են «տրանսպոզիցիա» (Тп) կամ «անցում» անվանումներով: Ըստ ռուս լեզվաբան Ա. Ի. Սմիրնիցկու՝

¹ Տե՛ս **Bauer L.**, English word-formation, Cambridge University Press, UK, 2004, էջ 226:

² Տե՛ս **Lyons J.**, Semantics, Cambridge University Press, UK, 1976, էջ 280:

³ Տե՛ս **Marchand H.**, The categories and types of present-day English word-formation, Otto Harrassowitz, Wiesbaden, 1960:

⁴ Տե՛ս Լ. Մ. Խաչատրյան, Խոսքիմասային տարաբեքությունն արդի հայերենի կայուն կապակցություններում, ՀՀ ԳԱԱ հրատարակչություն, Եր., 1996, էջ 49:

Տո-ն մասնավորապես բառակերտման եղանակ է, որտեղ սերող և ածանցյալ իմաստները կապված են ներքին հարաբերությամբ ու իմաստային ածանցելիությամբ: Նա այն տեսակետն է զարգացնում, որ Տո-ն ուղեկցվում է սերող իմաստի մասնակի պահպանումով (կամ դրա կորստով), որի հետևանքով բառերը կարող են ձեռք բերել քերականական տարաբեկություն⁵:

Ն. Բ. Գվիշիանին բազմագործառույթ բառերի ծագման առնչությամբ գրում է. «Հաճախ խոսքի մասի բառաքերականական նշանակությունների հարաբերակցությունը չի պահպանվում, բառի քերականական կարգային նշանակությունը հեռանում է նրա կոնկրետ բառային իմաստից՝ առաջ բերելով ձևաբանաշարահյուսական բազմագործառույթություն: Դա բառույթի բառաքերականական այն ներունակությունն է, որ բավարարում է մեկից ավելի խոսքիմասային նշանակությունների»⁶:

Նշենք, որ Մ. Յա. Բլոխը բառերն ըստ խոսքի մասերի դասակարգելիս խոսում է նաև խոսքիմասային փոխանցումների այն տեսակի մասին, որն իրականանում է փոխակարգման միջոցով (զրո ձևությամբ)⁷:

Իսկ Շառլ Բալլին Տո-ն մեկնաբանում է իբրև մի գործընթաց, որ տեղի է ունենում առանց սերող լեզվական կաղապարների կառուցվածքային փոփոխության, որտեղ ածանցյալը ձեռք է բերում նոր նշանակություն՝ բառույթն օժտելով համակարգային տարբեր հատկանիշներով: Նա Տո-ն ավելի լայն է ընկալում՝ փոխակերպման այդ երևույթը բառերի ոլորտից տեղափոխելով բառակապակցությունների հարթություն⁸:

Ամերիկացի Ուոլլես Լ. Չեյֆը ընդունում է, որ գրոյական նորակազմության դեպքում սերող հիմքը և ածանցյալ նոր բառը ձևով միմյանցից չեն տարբերվում, և նման դեպքերում այդ բառերն իմաստով ու քերականական արժեքով կարող են բաշխվել տարբեր խոսքի մասերի միջև՝ առաջ բերելով իմաստաարժեքային զուգաձևություն⁹:

Ակադեմիկոս Է. Աղայանը փոխակարգումն անվանում է «խոսքիմասային չեզոքացում»¹⁰, իսկ պրոֆեսոր Մ. Ասատրյանը, վերլուծելով խոսքիմասային փոխանցումները, ներկայացնում է դրանց հիմնական կաղապարները ժամանակակից հայերենում, որոնք, ի դեպ, հաճախ համընկնում են անգլերենի կաղապարների հետ, որոնք կնշվեն ստորև: Նա վերլուծում է խոսքիմասային

⁵ Տե՛ս **Смирницкий А. И.**, Лексикология английского языка. М., МГУ, 1956, էջ 80-84:

⁶ **Гвишиани Н. Б.**, Полифункциональные слова в языке и речи. Московский государственный университет им. М. В. Ломоносова, «Высшая школа», М., 1979, с. 175.

⁷ Տե՛ս **Блох М. Я.**, Теоретическая грамматика английского языка. «Высшая школа», Москва, 1983, էջ 45-47:

⁸ Տե՛ս **Балли Ш.**, Общая лингвистика и вопросы французского языка. Изд-во иностранной литературы, М., 1955, էջ 131:

⁹ Տե՛ս **Чейф У. Л.**, Значение и структура языка. Прогресс, М., 1975, էջ 40-41:

¹⁰ **Է. Բ. Աղայան**, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը (կառուցվածքային վերլուծություն), ՀԽՍՀ ԳԱ հրատ., Եր., 1967, էջ 143:

փոխանցումների հիմնական տիպերը և առանձնացնում է ած./գոյ., գոյ./կապ, գոյ./մկբ., ած./մկբ. բառախմբերը՝ նկատելով, որ բառերի խոսքի-մասային արժեքի երկփեղկումը տեղի է ունենում շարահյուսական կիրառության հիմքի վրա¹¹:

Սույն աշխատանքում որպես ելակետ ընտրվել է Ուոլլես Լ. Չեյֆի մոտեցումը, ըստ որի՝ փոխակարգումը սերող բառի խոսքիմասային փոփոխության արդյունքում նոր բառի ստեղծումն է, որը չի ենթադրում սերող բառի ձևի որևէ ձևաբանական փոփոխություն:

«Փոխակարգում» երևույթը առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում տիպաբանական ուսումնասիրության տեսանկյունից¹²: Ժամանակակից անգլերենում բառակազմական այս միջոցի լայն կիրառումը պայմանավորված է լեզվում միավանկ բառերի մեծ զանգվածի առկայությամբ: Անգլերենում փոխակարգման հիմնական կաղապարներն են՝

1. $N \rightarrow V$ (բայերի սերումը գոյականներից),
2. $ADJ, ADV, N \rightarrow V$ (բայերի սերումն այլ խոսքի մասերից),
3. $V \rightarrow N$ (գոյականների սերումը բայերից),
4. $ADJ, ADV, V \rightarrow N$ (գոյականների սերումն այլ խոսքի մասերից),
5. $N \rightarrow ADJ$ (ածականների սերումը գոյականներից)¹³:

Ինչպես արդեն նշվել է, երկու լեզուների՝ անգլերենի և հայերենի ուսումնասիրվող նյութը լի է փոխակարգումներով:

Ստորև ներկայացված է անգլերենի «տարիք» իմաստ արտահայտող բառերի մի շարք, որտեղ առկա միավորները միաժամանակ պատկանում են մի քանի խոսքի մասի՝

Adult-adjective (*having reached maturity, fully developed*), **noun** (*one who has attained maturity or legal age*),

Elderly-adjective (*being past middle age and approaching old age, rather old*), **noun** (*an elderly person*),

Whelp-noun (*any of the young of various carnivorous mammals and especially of the dog*), **verb** (*to give birth to —used of various carnivores and especially the dog*),

Big-adjective (*more advanced in age: older*), **adverb** (*to a large amount or extent*),

Senior-noun (*a person older than another*), **adjective** (*of prior birth, establishment, or enrollment —often used to distinguish a father with the same given name as his son*) և այլն:

¹¹ Տե՛ս **Մ. Ե. Սաարյան**, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1983, էջ 38-42:

¹² Տե՛ս **Yule G.**, The Study of Language, 6th edition, Cambridge University Press, Cambridge, 2014, էջ 77:

¹³ Տե՛ս **Sandor M.**, Conversion in English, A cognitive semantic approach, Cambridge Scholars Publishing, UK, 2013, էջ 81-87:

Անգլերենի ուսումնասիրված լեզվանյութում փոխակարգման հիմնական կաղապարներն են՝ ADJ→ N (գոյականների սերումը ածականներից, դուրս է բերվել 10 օրինակ՝ *coeval-adjective of the same age or duration, equally old, noun a contemporary*), N → V (բայերի սերումը գոյականներից, դուրս է բերվել 5 օրինակ՝ *age-noun the length of time that a person or thing has existed, verb to become old or show signs of becoming old*), N→ ADJ (ածականների սերումը գոյականներից, դուրս է բերվել 4 օրինակ՝ *maiden-noun a girl or young unmarried woman; maid, adjective of, pertaining to, or befitting a maiden*): Ուսումնասիրված նյութում երեքական անգամ հանդիպում են նաև ADJ→ N, V (գոյականների և բայերի սերումն ածականներից՝ *grey-adjective connected with old people, noun colour, verb to become or make grey*), ADJ→ ADV, N (մակբայների և գոյականների սերումը ածականներից՝ *small-adjective having comparatively little size or slight dimensions, adverb in a small manner, noun a part smaller and especially narrower than the remainder*) և N→ ADJ, V (ածականների և բայերի սերումը գոյականներից՝ *kid-noun a young person, especially child, adjective younger, verb to bring forth young*) կաղապարները:

Մեկական օրինակ են V→ ADJ, N (ածականների և գոյականների սերումը բայերից՝ *grow(n)-up-verb to grow toward or arrive at full stature or physical or mental maturity, adjective having reached the age of maturity, noun an adult*) և ADJ→ V (բայերի սերումը ածականներից՝ *mature-adjective of, relating to, or being an older adult: elderly, verb to become fully developed or ripe*) կաղապարները: Այսպիսով, անգլերենի լեզվանյութի՝ տարիք ցույց տվող 69 միավորից 30-ը կազմված են փոխակարգման միջոցով և ընդհանուր միավորների 43,5 տոկոսն են:

Ստորև ներկայացված են հայերենի «տարիք» իմաստ արտահայտող մի շարք միավորներ, որոնք պատկանում են մի քանի խոսքի մասի՝

Աչևոր-ածական, գոյական (ծեր, ծերունի)

Աղվամագ-գոյական (նուրբ ու փափուկ մագ), ածական (երեսին աղվամագ ունեցող, պատանի)

Անչափահաս-ածական, գոյական (ոչ չափահաս, չափահասության չհասած)

Ավագ-ածական (տարիքով մեծ, ամենամեծ), գոյական (դեկավար, պետ)

Դեռահաս-ածական (նոր հասնող, հասած), գոյական (մանկական հասակից պատանեկության անցման տարիք ունեցող տղա կամ աղջիկ)

Երեխա-գոյական (նորածին աղջիկ կամ տղա), ածական (անչափահաս, դեռահաս)

Երիտասարդ-գոյական (չափահասության հասակից մինչև 40 տարեկան հասակը), ածական (ոչ տարիքոտ, մեծ հասակի չհասած, ջահել)

Ծեր-ածական (ծերության հասած, շատ տարիներ ապրած), գոյական (ծերունի)

Պատանի-գոյական (արբունքի հասակին չհասած տղա), **ածական** (պատանեկան հասակ ունեցող)

Տարեց-ածական, գոյական (ոչ երիտասարդ, հասակն առած, տարիքով) և այլն:

Ինչպես տեսանք օրինակներից, հայերենի լեզվանյութում առանձնանում է փոխակարգման երկու հիմնական կաղապար՝ $ADJ \rightarrow N$ (գոյականների սերումն ածականներից) և $N \rightarrow ADJ$ (ածականների սերումը գոյականներից): Հետաքրքիր է, որ այս երկու կաղապարներով սերված միավորների թիվը գրեթե նույնն է. դուրս է բերվել $ADJ \rightarrow N$ կաղապարով 20, իսկ $N \rightarrow ADJ$ կաղապարով՝ 21 օրինակ: Ստացվում է, որ հայերենի տարիք ցույց տվող 119 միավորից 41-ը կազմված է փոխակարգման միջոցով, որը ընդհանուր բառերի քանակի 33 տոկոսն է:

Ի տարբերություն անգլերենի նյութի, որտեղ հեշտությամբ կարելի է ածականը կամ գոյականը վերածել բայի և ունենալ սերող բառի խոսքիմասային փոփոխություն, որը չի ենթադրում ձևի որևէ ձևաբանական փոփոխություն՝ հայերենում տարիք ցույց տվող միավորների շարքում փոխակարգման միջոցով ստեղծված բայերն ունեն հայերենի բայերին հատուկ *-ել*, *-ալ* վերջավորություն, օրինակ՝ *մեծ-մեծանալ*, *երիտասարդ-երիտասարդանալ*, *ծեր-ծերանալ* և այլն: Այս երևույթը ռուս լեզվաբան Դ. Սոկոլենկոն նկարագրում է որպես «սերող և ածանցյալ նոր բառի հիմքերի համընկնում» և այդ միավորները կոչում բայ-փոխակարգիչներ (глагол-конверсивы)¹⁴:

Հայերենի ուսումնասիրված նյութում առհասարակ բարդ է առանձնացնել նաև մակբայները, քանի որ վերջիններս վեր են հանվում կա՛մ շարահյուսական տարբեր կապակցություններից, կա՛մ ունեն համապատասխան մակբայակերտ վերջածանց: Բնականաբար, վերջածանցով կազմված միավորները չի կարելի դասել փոխակարգման օրինակների շարքին: Հետևաբար, ինչպես հայերենի բայերը, այնպես էլ մակբայները դուրս են մնում փոխակարգման կաղապարներով կազմված միավորների ցանկից:

Անգլերենում և հայերենում «փոխակարգում» երևույթի ուսումնասիրությունը «տարիք» իմաստային դաշտի նյութի հիման վրա ցույց տվեց, որ

- հայերենի լեզվանյութում առանձնանում են փոխակարգման *երկու* հիմնական կաղապարներ՝ $ADJ \rightarrow N$ (գոյականների սերումն ածականներից) և $N \rightarrow ADJ$ (ածականների սերումը գոյականներից), մինչդեռ անգլերենի ուսումնասիրված լեզվանյութում փոխակարգման կաղապարները *վեցն* են՝ $ADJ \rightarrow N$ (գոյականների սերումը ածականներից), $N \rightarrow V$ (բայերի սերումը գոյականներից), $N \rightarrow ADJ$ (ածականների սերումը գոյականներից), $ADJ \rightarrow N$, V (գոյականների և բայերի սերումն ածականներից), $ADJ \rightarrow ADV$, N (մակբայ-

¹⁴ St' u **Соколенко Д.**, Конверсия как когнитивно-номинативный прием (на материале английского и русского языков). 2013, Известия СПбГЭТУ «ЛЭТИ», Вып. 2, СПб., էջ 128-129:

ների և գոյականների սերումը ածականներից) և $N \rightarrow ADJ, V$ (ածականների և բայերի սերումը գոյականներից):

- Ուսումնասիրվող ամբողջ բառանյութը հարուստ է բառակազմական այս միջոցի օրինակներով: Սակայն, եթե անգլերենում այսպիսի կաղապարները բնորոշ են բոլոր խոսքի մասերին, ապա հայերենում փոխակարգումը մեծ մասամբ բնորոշ է գոյականին և ածականին, որը պայմանավորված է հայերենի *բայ* և *մակբայ* խոսքի մասերի կոնկրետ վերջածանցների առկայությամբ:

- Ի տարբերություն անգլերենի, որտեղ հեշտությամբ կարելի է ածականը կամ գոյականը վերածել բայի և ունենալ սերող բառի խոսքիմասային փոփոխություն, որը չի ենթադրում ձևի հստակ ձևաբանական փոփոխություն, հայերենում փոխակարգման միջոցով ստեղծված բայերն ունեն հայերենի բայերին հատուկ *-ել*, *-ալ* վերջավորություն, ինչպես և մակբայները՝ հատուկ մակբայակերտ վերջավորություններ: Այս տարբերությունը պայմանավորված է հայերենի բառերի քերականական և բառակազմական հատկանիշների սերտակցման յուրահատկությունով. հայերենը խուսափում է ընդհանրական կառույցներից՝ նախընտրելով յուրաքանչյուր խոսքի մասին առանձին տարբերակիչ բառակազմական ձևությամբ օժտելու եղանակը:

Փոխակարգման ուսումնասիրությունը անգլերենի և հայերենի տարիք իմաստային դաշտում ցույց տվեց, թե ինչպես կարող է լեզուն զարգանալ՝ բավարարելու տվյալ լեզվով խոսող մարդկանց հաղորդակցական կարիքները:

МАРИАМ АДАМЯН – Конверсия в семантическом поле «возраст» в английском и армянском языках. – В данной статье исследуется феномен конверсии в семантическом поле «возраста» в английском и армянском языках. Конверсия, при которой слова меняют грамматические категории без изменения формы, распространена в английском языке, но менее распространена в армянском. Исследование рассматривает, как возрастные термины адаптируются через этот процесс в обоих языках. Результаты показывают, что в английском языке конверсия используется чаще, что позволяет гибко использовать возрастные термины как существительные и глаголы. В отличие от этого, армянский язык использует более структурированный подход, с возрастными терминами, интегрированными в его флективную систему. Этот сравнительный анализ акцентирует языковую адаптивность и выразительность каждого языка. Фокусируясь на возрастной лексике, исследование предоставляет понимание более широких лингвистических тенденций и культурных перспектив. Исследование решает проблемы идентификации конверсии в различных лингвистических контекстах. В целом, оно углубляет наше понимание того, как языки эволюционируют для выражения универсальных человеческих переживаний.

Ключевые слова: конверсия, возраст, семантическое поле, глагол-конверсивы, транспозиция, словообразование

MARIAM ADAMYAN – Conversion in the Semantic Field of “Age” in English and Armenian. – This article investigates the phenomenon of conversion within the semantic field of “age” in English and Armenian. Conversion, which involves words shifting grammatical categories without morphological changes, is prevalent in English but less common in Armenian. This study examines the adaptation of age-related terms through this process in both languages. The findings demonstrate that English frequently employs conversion, enabling age-related terms to function flexibly as both nouns and verbs. Conversely, Armenian utilizes a more systematic approach, incorporating age terms into its inflectional morphology. This comparative analysis elucidates cultural distinctions in perceptions of aging and the life cycle, as well as the linguistic adaptability and expressiveness characteristic of each language. By focusing on age-related vocabulary, this research offers insights into broader linguistic trends and cultural perspectives. It also addresses the methodological challenges associated with identifying conversion across diverse linguistic contexts. Ultimately, this study enhances our understanding of how languages evolve to articulate universal human experiences.

Key words: *conversion, age, semantic field, verb-conversives, transposition, word formation*

Գրականության ցանկ

Աղայան Է. Բ. Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը (կառուցվածքային վերլուծություն), ՀԽՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1967

Ասատրյան Ս. Ե. Ժամանակակից հայոց լեզու, Երևանի համալսարանի հրատ., Երևան, 1983

Խաչատրյան Լ. Ս. Խոսքիմասային տարաժեքությունն արդի հայերենի կայուն կապակցություններում, ՀՀ ԳԱԱ հրատարակչություն, Երևան, 1996

Bauer L. English word-formation, Cambridge University Press, UK, 2004

Lyons J. Semantics, Cambridge University Press, UK, 1976

Marchand H. The categories and types of present-day English word-formation, Otto Harrassowitz, Wiesbaden, 1960

Sandor M. Conversion in English, A cognitive semantic approach, Cambridge Scholars Publishing, UK, 2013

Yule G. The Study of Language, 6th edition, Cambridge University Press, Cambridge, 2014

Балли Ш. Общая лингвистика и вопросы французского языка, Изд-во иностранной литературы, Москва, 1955

Блох М. Я. Теоретическая грамматика английского языка, «Высшая школа», Москва, 1983

Гвишиани Н. Б. Полифункциональные слова в языке и речи, Московский государственный университет им. М. В. Ломоносова, «Высшая школа», Москва, 1979

Смирницкий А. И. Лексикология английского языка, Московский Государственный Университет, Москва, 1956

Соколенко Д., Конверсия как когнитивно-номинативный прием (на материале английского и русского языков), Известия СПбГЭТУ «ЛЭТИ», Вып.2, Санкт Петербург, 2013

Чейф У. Л., Значение и структура языка, Прогресс, Москва, 1975